Կազմված է «08» հոկտեմբերի, 2021թ.
բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԼՈՒՅՍԵՐ» ՓԲԸ-ի
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի «08» հոկտեմբերի 2021թ. որոշմամբ
արձանագրություն թիվ 08102021-1

Տնօրեն՝
Գրիգոր Չիչոյան

_______________

«08» «հոկտեմբեր» 2021թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

Գրանցման օր՝ «29» ապրիլի, 2019 թվական

Պետական գրանցման համար՝ 271.120.1071408
ՀՎՀՀ՝ 01291675
29.04.2019թ. գրանցված կանոնադրության
թիվ 002 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից

«15» 10 2021 թվական

_______________

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

# «ԼՈՒՅՍԵՐ»
# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

**2021 թ.**

1. «Լույսեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. Կանոնադրության 10-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«10. Ընկերության կանոնադրական կապիտալը 582,310,000 (հինգ հարյուր ութսուներկու միլիոն երեք հարյուր տասը հազար) ՀՀ դրամ է: Այն բաղկացած է 582,310 (հինգ հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր տասը) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերից, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխվել, լրիվ վճարվել և ձեռք են բերվել ընկերության բաժնետերերի կողմից»:*

1.2. Կանոնադրության 23-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«23. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը: Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն: Ընկերությունը կարող է թողարկել՝*

1) *Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.*
2) *երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.*
3) *առանց ապահովման պարտատոմսեր:»:*

***Սույն կանոնադրության փոփոխությունը հանդիսանում է «Լույսեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության անբաժանելի և բաղկացուցիչ մասը:***